

**ՊԱՂԵՍՏԻՆՑԱՆ ՀԱՐՑԸ ՀՈՐԴԱՆԱՆԱԻՄՐԱՅԵԼԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ  
ԱԲՂԱԼԼԱՀ II-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

*Սարգիս Ղազարյան*

*Բանալի քառեր՝ Հորդանան, Բարայել, Պաղեստին,  
պաղեստինահիսթորիկական, հակամարտություն, փախստականներ,  
բանակցություն, համաձայնագիր, խաղաղություն*

1999 թ. իշխանության գալուց անմիջապես հետո Աբդալլահ II-ը մատնանշեց Հորդանանի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության առաջնահերթությունները: Նրա առաջ քաշած թեզերն, ըստ ամենայնի, մշակվել էին Հուսեյն թագավորի կենդանության օրոք: 1999 թ. արաբական «Ալ-Կուդս Ալ-Արաբի» թերթին տված հարցազրույցում Աբդալլահ թագավորը հայտարարեց, որ Հորդանանը գտնվում է նոր դարաշրջանի շեմին, և որ առաջնահերթությունը տրվելու է ներքաղաքական խնդիրներին, երկրի բարգավաճմանը և ազգային միասնության ամրապնդմանը<sup>1</sup>: Աբդալլահ թագավորը հասկացրեց, որ Հորդանանը չի պատրաստվում վճռորոշ դեր ունենալ տարածաշրջանային զարգացումներում, առավել ևս՝ մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում: Խոսելով Բարայելի հետ Հորդանանի հարաբերությունների մասին՝ նա ասաց, որ դրանք երբեք չեն կառուցվի ի վնաս արաբական երկրների: Աջակցելով պաղեստինյան հարցի արդարացի

---

<sup>1</sup> Interview with His Majesty King Abdullah II, by Abdel Bari Atwan for Al Quds Al-Arabi, 8 April 1999, <http://www.kingabdullah.jo>

կարգավորմանն ու անկախ Պաղեստին պետության ստեղծմանը՝ Արդալլահ թագավորը հայտարարեց, որ իրենց դռները բաց են պաղեստինցիների հետ հնարավոր համագործակցության բոլոր ձևաչափերի առաջ, բայց միայն անկախ Պաղեստին պետության հռչակումից և վերջնական կարգավիճակի սահմանումից հետո<sup>2</sup>:

Արդալլահ II-ի կառավարման տարիները ցույց տվեցին, որ թե՛ Իսրայելի հետ հարաբերություններում, թե՛ պաղեստինաիսրայելական հակամարտության հարցում Հորդանանի քաղաքականությունը հանգուցային փոփոխությունների չենթարկվեց: Իրականում, Հորդանանի մոտեցումներն աչքի էին ընկնում գուսպ և հավասարակշռված շեշտադրումներով, ինչն անմիջականորեն բխում էր պետության ազգային անվտանգության շահերից: Իսրայելի հետ հարաբերությունները սկզբնավորվել էին Հորդանանի Հաշիմյան Թագավորության հիմնադիր Արդալլահ I-ի ժամանակ, այնուհետև շարունակվել Հուսեյն թագավորի օրոք՝ ի վերջո արմագրվելով 1994 թ. Խաղաղության համաձայնագրով: Ամեն պարագայում, Իսրայելի համար Հորդանանի ներգրավվածությունը պաղեստինյան հարցի լուծման մեջ շահեկան կլիներ, քանի որ Հորդանանը կարող էր լինել պաղեստինյան տարածքների անվտանգության երաշխավոր: Բացի այդ՝ Հորդանանն այն հազվադեպ արաբական երկրներից էր, որն Իսրայելի հուսալի դաշնակիցն էր: Իր հերթին, պաղեստինյան վարչակարգի առաջնորդ Յասեր Արաֆաթն Իսրայելի հետ բանակցություններում, արաբական երկրների աջակցության կարիքն ունենալով, նույնպես ցանկանում էր, որպեսզի Ամմանն ավելի ակտիվ կերպով միջամտեր խաղաղ բանակցություններին<sup>3</sup>:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Մադրիդյան գործընթացի արդյունքում տեղի ունեցավ Օսլո I (1993 թ., մի քանի տարի անց՝ Օսլո II (1995թ.)) հռչակագրի կնքումը: Օսլո I-ով ձեռք բերված

Նշենք, որ դեռևս 1991 թ. Մադրիդում Պաղեստինին նվիրված միջազգային խաղաղության համաժողովում պաղեստինցիների մասնակցության դեմ Իսրայելի և ԱՄՆ-ի դիրքորոշման պատճառով Հորդանանը և պաղեստինյան կողմը հանդես եկան միացյալ պատվիրակությամբ<sup>4</sup>:

Հատկանշական է, որ Հուսեյն թագավորի մահից օրեր անց Յասեր Արաֆաթը հայտարարեց, որ ինքը թագավորի հետ պայմանավորվածություն է ունեցել պաղեստինահորդանանյան դաշնության ստեղծման մասին: Հիշենք, որ մինչև մահանալը Հուսեյն թագավորը բազում անգամներ առիթ էր ունեցել հայտարարելու, որ իրենք հրաժարվել են հորդանանապաղեստինյան միացյալ պետության գաղափարից: Պատահական չէ, որ Արաֆաթի հայտարարությունը լուրջ դժգոհություն առաջ բերեց Հորդանանի քաղաքական շրջանակներում<sup>5</sup>: Հորդանանապաղեստինյան միացյալ պետության դեմ հանդես եկավ նաև Աբդալլահ II թագավորը՝ նշելով, որ այն վնաս կհասցնի պաղեստինյան հարցի լուծմանն ու կթուլացնի պաղեստինցիների դիրքերը բանակցային գործընթացում: Աբդալլահ թագավորի համոզմամբ՝ դաշնությունը երկու բացարձակ անկախ պետությունների միություն է: Ըստ այդմ՝ դաշնության ստեղծումը հնարավոր կլինի միայն պաղեստինյան անկախ պետության

---

համաձայնության հենքի վրա 1994 թ. ստեղծվեց Պաղեստինի Ինքնավարությունը (1993-2013 թթ.):

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս The Madrid Peace Conference, Journal of Palestinian Studies, vol. 21, no. 2, 1992, pp. 117-149.

<sup>5</sup> Յասեր Արաֆաթի հայտարարության դեմ արտահայտվեցին վարչապետ Ֆայեզ Ալ-Թարավնեն, մի շարք խորհրդարանականներ, հասարակական գործիչներ՝ բողոքելով, որ Արաֆաթը միայն ավելացնում է Հորդանանի խնդիրները, այն դեպքում, երբ երկիրը սգում է Հուսեյն թագավորի մահը: Տե՛ս Jordan Rejects Confederation with Arafat, Al-Ahram Weekly, February 23, 1999.

ստեղծումից հետո. «Մենք հավատում ենք, որ ներկա փուլի համար միանգամայն ոչ բանական է խոսել դաշնության մասին»<sup>6</sup>:

Ընդհանրապես, պաղեստինյան խնդրի տարբեր կողմերի հետ կապված Աբդալլահ II թագավորի պարզաբանումներում շատ հստակ երևում էր, որ նա մշտապես փորձում է տարանջատել Հորդանանն ու պաղեստինյան հարցը: Թագավորը շեշտում էր, որ պաղեստինցիներն իրենք պետք է որոշեն իրենց ճակատագիրը, այդ թվում՝ Երուսաղեմի կարգավիճակի հարցը, թեև Հորդանանը համարվում է Երուսաղեմի իսլամական սրբատեղիների խնամակալը (ինչն ամրագրված է նույն 1994 թ. պայմանագրով): Ըստ այդմ՝ Երուսաղեմը պաղեստինյան քաղաք է, և պաղեստինցիներն իրենք պետք է պատասխանատվություն կրեն քաղաքի ճակատագրի նկատմամբ, կարողանան Իսրայելի հետ բանակցություններում գտնել լուծում, որը կբավարարի Երուսաղեմի և սրբատեղիների նկատմամբ արաբական և իսլամական աշխարհի հետաքրքրությունները:

Այս շրջանակում, սակայն, կար մի հարց՝ պաղեստինցի փախստականների խնդիրը, որն Աբդալլահ թագավորը համարում էր նաև իրենցը: Հորդանանի տարածքում 1,6 միլիոն պաղեստինցի փախստական կար, որից 285 հազարը տեղակայված էին տասը ճամբարներում<sup>7</sup>: Թագավորի խոսքերով՝ «Հորդանանը պետք է դերակատարություն ունենա փախստականների հարցի շուրջ բանակցություններում, քանի որ ամենաշատ պաղեստինցի փախստականներ հյուրընկալող երկիրն է»<sup>8</sup>: Հատկանշական է, որ

---

<sup>6</sup> Interview with His Majesty King Abdullah II, Al Hawadeth 17 September 1999, by Melhem Karam, <http://www.kingabdullah.jo>

<sup>7</sup> UNRWA in Figures as of 31 December 2000. Public information Office, UNRWA Headquarters /Gaza/, April 2001, [www.un.org](http://www.un.org)

<sup>8</sup> Interview with His Majesty King Abdullah II, Al Hawadeth 17 September 1999, նույն տեղում:

Հորդանանի իշխանությունները քաղաքացիություն չէին տալիս պաղեստինցի փախստականներին, և վերջիններս իրենք էլ չէին ուզում ստանալ այն, որպեսզի հակամարտության կարգավորումից հետո հնարավորություն ունենային վերադառնալ իրենց բնակավայրերը:

Աբդալլահ II-ի իշխանության գալուց հետո՝ 1999 թ. մայիսին, Իսրայելում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որի նախօրեին «Ավոդա» («Աշխատանքի») կուսակցության նախագահ Էհուդ Բարաքն այցելեց Ամման<sup>9</sup>՝ քննարկելու հորդանանափրայելական հարաբերություններին առնչվող հարցեր: Էհուդ Բարաքի հաղթանակից և վերջինիս վարչապետ դառնալուց հետո Աբդալլահ II-ը հայտարարեց Իսրայելի վարչապետի և նրա ղեկավարած կաբինետի հետ համագործակցելու մտադրության մասին՝ վերսկսելու և արագացնելու մերձավորարևելյան խաղաղության գործընթացը<sup>10</sup>:

Հատկանշական է, որ հենց 1999 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հորդանանյան ղեկավարությունը ձեռք առավ բավական ոչ սովորական քայլեր՝ կասեցնելով պաղեստինյան իսլամամետ «Համաս» շարժման մասնաճյուղի գործունեությունը Հորդանանում: Արգելանքը հիմնավորվեց «Համասի» կողմից ահաբեկիչների համար ռազմամարզական ճամբարներ ստեղծելու, զենք պահելու և Հորդանանի տարածքում ծայրահեղական քարոզչությամբ զբաղվելու պատճառաբանությամբ: Սկսեցին փակվել «Համասի» ներկայացուցչությունները, կազմակերպության շատուշատ անդամներ ձերբակալվեցին, իսկ «Համասի» այնպիսի հանգուցային ղեմքեր, ինչպես Քաղբյուրոյի նախագահ Խալեդ

---

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Statement of HM King Abdullah II on the Election of Mr. Ehud Barak as Prime Minister of Israel, issued Tuesday, May 18, 1999, <http://www.kingabdullah.jo>

Մաշալը և նախկին նախագահ Մուսա Աբու Մարգուկը, արտաքսվեցին երկրից<sup>11</sup>:

«Համասի» նկատմամբ ճնշումներն, ըստ էության, սպասարկում էին թե՛ Իսրայելի, թե՛ Պաղեստինի ազատագրության կազմակերպության (արաբերեն՝ «Ֆաթհ») շահերը: Պաղեստինախորհրդակցական վերսկսված բանակցությունների ընթացքում Իսրայելը ցանկանում էր թուլացնել «Ֆաթհի» հակառակորդների, մասնավորապես՝ «Համասի» դիրքերը: Հիշենք, որ 1997 թ. իսրայելական հատուկ ծառայություններն Ամմանում չկարողացան հաջողել Խալեդ Մաշալին շարքից հանելու գործողությունը: Պատահական չէ, որ 1999 թ. «Համասի» դեմ ճնշումներից հետո Ամմանում բացվեց Մոսադի ներկայացուցչություն, որը փակվել էր 1997 թ. դեպքերից հետո<sup>12</sup>:

Մյուս կողմից, «Համասի» ներկայությունը Հորդանանում նպաստում էր ներքաղաքական իրավիճակի էլ ավելի սրմանը, եթե հաշվի առնենք, որ հորդանանյան հասարակության մոտ կեսը պաղեստինցիներ էին: Արդալլահ II-ը պաշտոնապես հիմնավորեց «Համասի» դեմ գործողությունների անհրաժեշտությունը: Նա նշեց, որ շարժման գործունեությունը սպառնում էր Հորդանանի ներքին անվտանգությանը: Շեշտեց, որ Հաշիմյան թագավորությունն աջակցում է Յասեր Արաֆաթի վարչակազմին՝ որպես պաղեստինյան միակ օրինակարգ իշխանություն<sup>13</sup>:

Արդալլահն II-ն, ըստ ամենայնի, ձգտում էր թույլ չտալ հորդանանյան իսլամամետներին պաղեստինյան խնդիրը

---

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս Госпожа госсекретарь. Мемуары Мадлен Олбрайт, М., 2004.

<sup>12</sup> Баазова Л. Х., Новый король Иордании Абдалла и иордано-израильские отношения, Ближний Восток и современность. Сб. ст. Вып. 8. Отв. Ред. В. А. Исаев, А. О. Филоник, М., 1999, с. 44.

<sup>13</sup> Interview with His Majesty King Abdullah II, by Melhem Karam, Al-Hawadeth, 17.09.1999, ըստ՝ <http://www.kingabdullah.jo>

տեղափոխել կրոնաքաղաքական հարթակ և արմատական մոտեցումներ առաջ քաշել: Խոսքը ոչ միայն «Համափ», այլև Հորդանանի «Մուսուլման եղբայրների» և նրանց քաղաքական թևի՝ «Իսլամական գործողության ճակատի» մասին էր, որոնք, բնականաբար, համասամետ էին: Գաղտնիք չէ, որ պաղեստինյան հարցում հորդանանյան Եղբայրները միշտ էլ քննադատել են թե՛ հորդանանախորայելական խաղաղ բանակցությունները, թե՛ այդ շրջանակներում ընդունված համաձայնագրերը<sup>14</sup>:

Աբդալլահ II թագավորի իշխանության գալուց հետո Ամմանը հավանության արժանացրեց 1999թ. սեպտեմբերի 4-ի հուշագիրը, որը կնքվեց Շարմ Ալ-Շեյխում և կոչվում էր «Չիրականացված պարտավորությունների փուլափուլ իրականացում նախկինում կնքված համաձայնագրերի հիման վրա, ինչպես նաև վերջնական կարգավիճակի վերաբերյալ բանակցությունների վերսկում»: Այս գործընթացը ենթադրում էր 2000թ. սեպտեմբերին պաղեստինախորայելական համապարփակ խաղաղության պայմանագրի կնքում<sup>15</sup>:

Հատկանշական է, որ Աբդալլահ II-ը ձեռնպահ մնաց իր գահակալությունից անմիջապես հետո Իսրայել այցից, որը նախատեսված էր 1999թ. հոկտեմբերին հորդանանախորայելական համաձայնագրի կնքման հնգամյակի օրը: Միայն 2000թ. ապրիլի 23-ին նա ժամանեց Աքաբայի ծովածոցում գտնվող Էյլաթ նավահանգիստը, հանդիպեց Էհուդ Բարաքին և նրա հետ քննարկեց հորդանանախորայելական հարաբերությունների և վերջնական կարգավիճակի մասին պաղեստինախորայելական

---

<sup>14</sup> Հորդանանի «Մուսուլման եղբայրների» մասին մանրամասն տե՛ս Joan Jose Escobar Stemmann, *The Crossroads of Muslim Brothers in Jordan*, March, 4, 2010, <http://www.gloria-center.org>

<sup>15</sup> Remarks at the signing of the Wye River Accord 4 September, 1999, <http://fpc.state.gov/documents/organization/13848.pdf>

բանակցությունների հետ կապված հարցեր: Պատահական չէ, որ թագավորը խուսափեց Թել-Ավիվ և Երուսաղեմ այցելելուց: Արդալլահ II-ը նշեց, որ թե՛ Էհուդ Բարաքի կառավարության ձևավորումը և թե՛ Իսրայելի կողմից նախկին համաձայնագրերի կատարումը, ինչպես նաև Սիրիայի հետ խաղաղության հաստատումը, կարող էին շահեկան լինել պաղեստինախարայելական խնդրի կարգավորման համար<sup>16</sup>:

2000թ. հուլիսի 11-25-ը ԱՄՆ-ի Քեմփ Դեյվիդում նախագահ Բիլ Բլինթոնի միջնորդությամբ և հովանավորությամբ անցկացվեց համաժողով՝ պաղեստինախարայելական խաղաղ համաձայնագրի ստորագրման նպատակով: Նախքան Քեմփ Դեյվիդը, Հորդանանն ակտիվացրեց իր մերձավորարևելյան քաղաքականությունը՝ շփումներ հաստատելով թե՛ պաղեստինյան, թե՛ իսրայելական կողմերի հետ<sup>17</sup>:

Քեմփ Դեյվիդն ավարտվեց առանց որևէ արդյունքի: Պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթը հրաժարվեց ընդունել Իսրայելի վարչապետ Էհուդ Բարաքի առաջ քաշած պայմանները<sup>18</sup>: 2000թ. սեպտեմբերի վերջին Ալ-Ակսայի ինթիֆադայի օրերին պաղեստինցիներին չբավարարեցին Իսրայելի

---

<sup>16</sup> Interview with His Majesty King Abdullah II with Al Ghad, August 10, 2014, <http://jordanembassyus.org/news/interview-his-majesty-king-abdullah-ii-al-ghad>

<sup>17</sup> Jordan intensifies diplomacy ahead of Camp David summit, 7/9/2000, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=jordan-intensifies-diplomacy-ahead-of-camp-david-summit-2000-07-09>

<sup>18</sup> Էհուդ Բարաքը պատրաստ էր պաղեստինցիների հետ հաշտության պայմանագիր կնքել, եթե նրանք ընդունեին, որ Երուսաղեմը գտնվելու է Իսրայելի ինքնիշխանության ներքո, 1967 թ. սահմանները պետք է փոփոխության ենթարկվեն, Հուդայի, Սամարայի, Գազայի հրեական բնակավայրերի մեծ մասը պետք է մնան Իսրայելի ինքնիշխանության ներքո, Հորդանան գետի և Իսրայելի սահմաններին օտար ռազմական ուժեր չպետք է տեղակայվեն, պաղեստինցի փախստականների հարցը պետք է լուծվի Իսրայել պետության սահմաններից դուրս: Իսրայելի վարչապետը նշում էր, որ համաձայնությունը պետք է ձեռք բերվի երկու կողմերից էլ ցավոտ զիջումների գնով:



զիջումները: Մինչդեռ Բարաքի խոսքերով՝ պաղեստինցիներին և իսրայելցիներին կա՛մ սպասում է «քաջերի խաղաղություն» կա՛մ՝ դաժան հակամարտություն, որը կբերի տանջանքների և զոհերի, բայց ոչինչ չի վճռի<sup>19</sup>:

ԱՄՆ-ի միջնորդությամբ Իսրայելի և պաղեստինցիների ջանքերը եզիպտական Թաբա քաղաքում 2001թ. հունվարի 21-27-ը համաձայնության հասնելու հարցում նույնպես ձախողվեցին: 2001թ. փետրվարին Իսրայելում վարչապետ դարձավ «Լիկուդի» առաջնորդ Արիել Շարոնը: Նոր աջակողմյան կառավարությունն իր առաջ խնդիր դրեց միակողմանի կերպով ապահովել Իսրայելի անվտանգությունն արդեն երկրորդ ինթիֆադայի շրջանում, որն իսրայելական հասարակության աչքին հեղինակագրկեց թե՛ 1990-ականներից սկիզբ առած բանակցային գործընթացը, թե՛ «Տաթիի» առաջնորդ Յասեր Արաֆաթին<sup>20</sup>:

Ալ-Ակսայի ինթիֆադան նորից ոտքի հանեց հորդանանյան հասարակությանը՝ առաջնային դարձնելով պաղեստինյան հարցը: Ինթիֆադայի շրջանում Հորդանանում տեղի ունեցան հուզումների ժամանակ զոհվածների հուղարկավորություններ և հրնթացս ցույցեր՝ ի պաշտպանություն պաղեստինցիների: Պաղեստինյան խնդրի նոր արժարժման համատեքստում հերթական անգամ ակտիվացան հորդանանյան իսլամիստները, նոր թափ ստացան պաղեստինյան հարցի շուրջ քննարկումները<sup>21</sup>:

Պաղեստինաիսրայելական զինված առճակատման վերսկսումը բացասական ազդեցություն ունեցավ նաև Հորդանանի

<sup>19</sup> Մանրամասն տե՛ս Robert Malley, Hussein Agha, Camp David: The Tragedy of Errors, The New York Review of Books, August 9, 2001.

<sup>20</sup> Демченко А. В., Израильское направление внешней политики Иорданского короля Абдаллы II и палестинская проблема в кн. Израиль в современном мире, сборник статей, М., 2009, стр. 239.

<sup>21</sup> Schenker David, Jordan and the Islamists: Unfinished Business. June 27, 2001, www.washingtoninstitute.org

սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Աբդալլահ II-ի խոսքերով՝ հակամարտության շարունակությունը լրջագույն սպառնալիք էր տարածաշրջանի զարգացման համար: «Չնայած վճռական քայլերին, որոնք արվում են Հորդանանում տնտեսական կյանքի ազատականացման նպատակով, տարածաշրջանում խաղաղության բացակայությունը ոչ բարենպաստ կերպով է անդրադառնում առևտրի, ներդրումների և տնտեսական համագործակցության վրա»<sup>22</sup>:

Ստեղծված ճգնաժամի արդյունքում Եգիպտոսն ու Հորդանանը շուտով առաջ քաշեցին պաղեստինախնայելական խաղաղ գործընթացի վերսկսման ծրագիր: Հորդանանի արտաքին գործերի նախարար Աբդալլահ Ալ-Խատիբը 2001թ. ապրիլի կեսերին Իսրայել կատարած այցելության ընթացքում այն հանձնեց վարչապետ Արիել Շարոնին: Ծրագիրն իր մեջ ներառում էր միջոցառումների երեք համախումբ: Առաջին՝ նպատակ էր դրվել հաղթահարել ինթիֆադայի հետևանքով Պաղեստինի Ինքնավարության և Իսրայելի միջև առաջ եկած ճգնաժամը և կողմերին վերադարձնել մինչ այդ գոյություն ունեցող իրավիճակը: Ըստ այդմ՝ պաղեստինցիներն ու իսրայելցիները պետք է միջոցներ ձեռք առնեին բռնությունները դադարեցնելու ուղղությամբ: Իսրայելից պահանջվում էր մեկ շաբաթվա ընթացքում դուրս բերել զորքերն այն շրջաններից, որտեղ դրանք մտցվել էին 2000թ. սեպտեմբերի վերջերին, և այդ շրջանները հանձնել պաղեստինյան իշխանությանը, ինչպես նաև վերացնել Արևմտյան ափի և Գազայի շրջափակումը և պաղեստինյան ինքնավարության նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները: Երկրորդ՝ անհրաժեշտ էր վերականգնել վստահությունը կողմերի միջև: Այդ նպատակի համար առաջարկվում էր կատարել 1999թ.

<sup>22</sup>Նույն տեղում:

սեպտեմբերին Շարմ Ալ-Շեյխում կնքված հուշագրի բոլոր կետերը, անհապաղ դադարեցնել գրավյալ տարածքներում հրեական բնակավայրերի շինարարությունն ու ընդլայնումը, այդ թվում՝ Արևելյան Երուսաղեմում, ինչպես նաև ամրապնդել անվտանգության համակարգը: Երրորդ՝ նշված բոլոր միջոցառումների իրականացմանը պետք է հաջորդէր պաղեստինախորհրդակցական բանակցային գործընթացի վերսկսումը՝ մեկ տարվա շրջանակներում լուծելու գրավյալ տարածքների հարցը՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242 բանաձևի և Էհուդ Բարաքի օրոք պաղեստինախորհրդակցական բանակցությունների ձեռքբերումների վրա: Չորրորդ՝ խաղաղության գործընթացը պետք է վարելին միջնորդները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Եվրամիությունը, ՄԱԿ-ը, Եգիպտոսը և Հորդանանը<sup>23</sup>:

Հարկ է նշել, որ Յասեր Արաֆաթը դրականորեն ընդունեց հորդանանաեգիպտական նախաձեռնությունը և հատկապես Իսրայելին ներկայացված զիջումները, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ծրագրում չէր քննարկվում պաղեստինյան կողմից ահաբեկչությունները կանխելու մեխանիզմների մշակման հարցը: «Ֆաթհի» ռազմական թևի ղեկավար Մըրվան Բարդուտին հորդանանաեգիպտական ծրագրի իրականացման հարցում լավատես չէր՝ համարելով, որ իսրայելական կառավարության հետ անիմաստ էր բանակցություններ վարելը: Արիել Շարոնի կառավարությունն իր հերթին, դժգոհ էր ծրագրից: Իսրայելին չէին գոհացրել ո՛չ բանակցությունների ժամկետները, ո՛չ էլ հրեական վերաբնակեցումը դադարեցնելու պահանջները: Իսրայելի կառավարությունը գիտակցում էր, որ Արաֆաթի վարչակարգը թույլ էր և ի վիճակի չէր կանխել ահաբեկչությունները: Դա էր

---

<sup>23</sup> The Jordanian-Egyptian Proposal Proposals for a Cease-Fire, April 19, 2001, <http://www.mideastweb.org/jordanegypt.htm>

պատճառը, որ Իսրայելը պատրաստ էր անվտանգության հարցը կարգավորել սեփական ուժերով՝ միակողմանի ձևով:

2001թ. մայիսին Իսրայելի արտաքին գործերի նախարարն այցելեց Կահիրե և Ամման՝ պետությունների առաջին դեմքերին հանձնելու Արիել Շարոնի դիտարկումները Եգիպտոսի և Հորդանանի առաջ քաշած ծրագրի վերաբերյալ<sup>24</sup>: Շիմոն Պերեսի այցելությունն օգնեց Շարոնին ի ցույց դնել, որ Իսրայելը բացահայտորեն չի մերժում հորդանանաեգիպտական նախաձեռնությունը: Ամեն պարագայում, Աբդալլահ II-ը և Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը խաղաղ կարգավորման գործընթացի վերսկսման ծրագրի իրականացման հարցում հազիվ թե մեծ հույսեր ունեին: Առանձին տեսակետների համաձայն՝ նրանց նպատակն էր՝ առաջին՝ ոտքի կանգնեցնել ոչ միայն ԱՄՆ-ին, այլև Եվրամիության երկրներին, Ռուսաստանին ու ՄԱԿ-ին՝ միջամտելու Պաղեստինում տեղի ունեցող գործընթացներին: Երկրորդ՝ Հորդանանն ու Եգիպտոսը նպատակ ունեին հստակեցնել իրենց դիրքորոշումը՝ որպես պաղեստինախարայելական հակամարտության կարգավորմամբ շահագրգիռ կողմեր<sup>25</sup>:

2002թ. մարտի վերջին Արաբական պետությունների լիգայի՝ Բեյրութի գազաթաժողովում ընդունվեց Մաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդալլահի նախաձեռնությունը, ով կոչ էր անում մերձավորարևելյան հակամարտությունը և արաբ-իսրայելական հարաբերությունների կարգավորումը լուծել ՄԱԿ-ի ԱԽ 242 բանաձևի հենքի վրա<sup>26</sup>:

---

<sup>24</sup> The only document on the table, Al-Ahram Weekly, 03-09.05.2001, Issue No. 532.

<sup>25</sup> Демченко А. В., նշվ. աշխ., էջ 242:

<sup>26</sup> Official translation of the full text of a Suadi-inspired peace plan adopted by the Arab summit in Beirut, 2002. The Arab Peace Initiative, <http://www.al-bab.com/arab/docs/league/peace02.htm>

Հորդանանը դրականորեն գնահատեց միջազգային քառյակի (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն, ՄԱԿ) կողմից 2003թ. ապրիլի 30-ին առաջ քաշված ճանապարհային քարտեզը, որը նկատի էր առնում՝ կողմերի միջև բռնության դադարեցում, բանակցությունների վերսկսում, պաղեստինյան գրավյալ տարածքների վերջնական կարգավիճակի որոշում, ի վերջո՝ 2005թ. խաղաղության պայմանագրի կնքում: Հատկանշական է, որ Հորդանանն ու Եգիպտոսը դեռևս 2001թ. իրենց ծրագրում առաջ էին քաշել մի շարք այնպիսի դրույթներ, որոնք ճանապարհային քարտեզում ներառված էին, ինչպես օրինակ՝ հակամարտության կարգավորում փուլ առ փուլ ճանապարհով, միջազգային միջնորդների ինստիտուտ և այլն: Իր հերթին, Իսրայելի կառավարությունը հերթական անգամ վստահ չէր, որ «Ֆաթեհ» կկարողանար ապահովել անվտանգությունը:

Ճանապարհային քարտեզի դրույթները քննարկելու նպատակով Հորդանանը 2003թ. հանդես եկավ մեկ այլ նախաձեռնությամբ՝ կազմակերպելով Աքաբայի համաժողովը, որին մասնակցեցին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը, Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը, Պաղեստինի Ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասը, Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը և այլք: Աբդալլահ II-ն իր ելույթում նշեց, որ ճանապարհային քարտեզն Իսրայելին առաջարկում է արաբների կողմից հավաքական անվտանգության երաշխիքներ, արաբական բոլոր պետությունների հետ բնականոն հարաբերություններ և հակամարտության հանգուցալուծում: Պաղեստինյան կողմի համար այն նշանակում է՝ օկուպացիայի ավարտ, կենսունակ պետություն, ազատ ու բարգավաճ ապրելու խոստում: Աբդալլահ

թագավորը նշում էր, որ երկու կողմից բռնությանը պետք է վերջ դնել<sup>27</sup>:

Հորդանանի թագավորի կարծիքով՝ Ճանապարհային քարտեզի իրականացումը մեծամասամբ կախված էր Իսրայելից, որը պետք է իր գորքերը դուրս բերեր պաղեստինյան տարածքներից, որպեսզի պաղեստինցիների շրջանում թուլանար լարվածությունը և վերականգնվեր վստահությունն Իսրայելի նկատմամբ: Ի վերջո. 2005թ. Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը դուրս բերեց զինուժը Գազայի հատվածից և լուծարեց տեղի բոլոր հրեական բնակավայրերը, ինչը բացառիկ դրական տեղաշարժ էր հակամարտության խաղաղ լուծման ճանապարհին:

2006թ. Պաղեստինյան Ինքնավարությունում տեղի ունեցած երկրորդ խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Ֆաթհի» նկատմամբ հաղթանակ տարավ «Համասը», որը թե՛ Իսրայելի, թե՛ Արևմուտքի կողմից դիտարկվում էր որպես ահաբեկչական կազմակերպություն: «Համասի» հաղթանակը, բնականաբար, որոշակի մտահոգություն առաջացրեց նաև Ամմանում, քանի որ կարող էր ակտիվացնել տեղի «Մուսուլման եղբայրների» և իսլամամետ այլ ուժերի դիրքերը, ովքեր համասամետ էին<sup>28</sup>: Շուտով իրադարձությունները Պաղեստինյան Ինքնավարությունում դրամատիկ դրսևորումներ ստացան. «Ֆաթհի» և «Համասի» միջև զինված ընդհարումներ սկսվեցին, որը հանգուցալուծվեց 2007թ. փետրվարի 8-ին Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ կնքված Մեքքայի հռչակագրով<sup>33</sup>: Կողմերը պարտավորվում էին դադարեցնել կրակը և ձևավորել միացյալ

---

<sup>27</sup> Remarks by President Bush, His Majesty King Abdullah of Jordan, Prime Minister Ariel Sharon and Prime Minister Mahmoud Abbas (04/06/2003), Le Monde Diplomatique, <http://www.monde-diplomatique.fr/cahier/proche-orient/a10136>

<sup>28</sup> Еще одна исламская революция: Израиль, ПНА и ХАМАС после вторых палестинских выборов, <http://www.iimes.ru>

կառավարություն: Հորդանանը, որը ողջունեց երկխոսությունը, կոչ արեց Իսրայելին, ինչպես նաև ԱՄՆ-ին ու Եվրամիությանը՝ դադարեցնել Պաղեստինի շրջափակումը, վերսկսել ինքնավարության ֆինանսավորումն ու խաղաղ բանակցային գործընթացը<sup>29</sup>: Արդալլահ II-ը հույս հայտնեց, որ պաղեստինյան նոր կառավարությունը՝ Իսմայիլ Հանիայի գլխավորությամբ, կընդունի միջազգային քառյակի օրինակարգությունն ու 2002թ. արաբական խաղաղ նախաձեռնությունը, որին ի պատասխան Իսրայելը կսկսի բանակցել Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի հետ<sup>30</sup>:

Սակայն հետագա տարիների իրադարձությունները, մասնավորապես՝ «Ֆաթհի» և «Համասի» միջև շարունակվող լարվածությունն ու փոխադարձ անվստահությունը, «Համասի» կողմից Իսրայել պետությունը չճանաչելն ու նախկինում կնքված պայմանագրերը չընդունելը, ի վերջո 2008թ. Գազայի հատվածում Իսրայելի կողմից Համասի դեմ սկսված պատերազմը, արժեզրկեցին միջազգային ասպարեզում հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու Հորդանանի ջանքերը՝ շատ դեպքերում ստիպելով հենց Արդալլահ II-ին վերապահում ունենալ խնդրի խաղաղ լուծման հեռանկարի վերաբերյալ: Այնուամենայնիվ, Հորդանանը հետագա տարիներին նույնպես շարունակեց ակտիվորեն մասնակցել մերձավորելյան հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված գործընթացներին:

Հարկ է նշել, որ Արդալլահ II-ի քաղաքականությունն Իսրայելի նկատմամբ թեև առճակատող բնույթ չուներ և ընդհանուր առմամբ քարիդրացիական էր ու համագործակցային, սակայն ժամանակ

<sup>29</sup> CRS Report for Congress. International Reaction to the Palestine Unity Government, <http://fas.org/sgp/crs/mideast/RS22659.pdf>

<sup>30</sup> Interview with His Majesty King Abdullah II by Ehud Yaari, Israel TV-Channel 1, 23 April 2000, <http://www.kingabdullah.jo>.

առ ժամանակ աչքի էր ընկնում կոշտ շեշտադրումներով: Ասվածի ապացույցը 2014 թ. նոյեմբերին սկսված Ալ-Ակսայի ճգնաժամն էր, երբ իսրայելական իշխանությունները փակեցին Երուսաղեմի Տաճարի լեռան վրա գտնվող մզկիթի՝ Ալ-Ակսայի մուտքը հավատացյալների առաջ, որին ի պատասխան՝ Հորդանանն Իսրայելից հետ կանչեց իր դեսպանին: Մա առաջին նման դեպքն էր 1994թ. հորդանանաիսրայելական խաղաղության համաձայնագրի ստորագրումից ի վեր: Աբդալլահ II-ը հայտարարեց, որ Հորդանանը չի հանդուրժի Իսրայելի կողմից սադրանքներ և ոտնձգություններ Հաշիմյանների խնամակալության ներքո գտնվող Երուսաղեմի սրբատեղիների նկատմամբ<sup>31</sup>:

Ընդհանրապես, Աբդալլահ II-ը թե՛ պաղեստինյան խնդրի կարգավորման հարցում, թե՛ Իսրայելի հետ հարաբերություններում շարունակեց հոր՝ Հուսեյն թագավորի քաղաքականությունը: Ի դեպ, թե՛ Հորդանանը, թե՛ Իսրայելը մեծ պատասխանատվությամբ էին վերաբերվում 1994թ. խաղաղության համաձայնագրին և ամեն կերպ ձգտում էին հետամուտ լինել դրա դրույթներին: Պատահական չէ, որ երկկողմ հարաբերությունները շուտով կարգավորվեցին, և երեք ամիս անց Հորդանանի դեսպանը վերադարձավ Իսրայել: Մյուս կողմից, Աբդալլահ II թագավորը Իսրայելի հետ հարաբերություններում շատ զգուշավոր էր և միշտ էլ փորձում էր խուսափել արաբական աշխարհի քննադատությունից:

Հարկ է նշել, որ Հորդանանն այն պետությունն է, որի համար պաղեստինյան խնդրի կարգավորումը վճռորոշ նշանակություն ունի պետության ազգային անվտանգության համար: Հորդանանյան հասարակությունը շատ զգայուն է պաղեստինյան հարցի

---

<sup>31</sup> Король Иордании: Израиль должен прекратить посягательства на мечеть Аль-Акса в Иерусалиме, <http://itar-tass.com/mezhdunarodnaya-panorama/1570513>.



նկատմամբ նաև այն պատճառով, որ հորդանանյան հասարակության կեսը, ինչպես նշեցինք, պաղեստինցիներ են: Հորդանանն ակտիվորեն մասնակցել է պաղեստինյան հարցին նվիրված տարբեր ձևաչափի միջազգային հանդիպումներին՝ միշտ էլ առաջ քաշելով երկու պետություն երկու ժողովրդի համար սկզբունքը: Անգամ «արաբական գարնան» դեպքերից, իրաքյան և սիրիական ճգնաժամերից հետո էլ Աբդալլահ II թագավորը պաղեստինյան հակամարտությունը դիտարկել է որպես հարցերի հարցը՝ համարելով, որ խնդրի կարգավորումը կայունություն, խաղաղություն ու բարգավաճում կբերի ողջ տարածաշրջանին: Հորդանանի միապետի համոզմամբ՝ հակամարտության կարգավորումը հնարավոր կդարձնի նաև արաբախորհրդային հարաբերությունների կարգավորումն ընդհանրապես: Մյուս կողմից, պաղեստինախորհրդային հակամարտության խաղաղ կարգավորման մեջ ներգրավված միջազգային ազդեցիկ շրջանակների մեջ Հորդանանն առանձնանում էր այնքանով, որ ազդեցիկ կողմ էր թե՛ պաղեստինցիների, թե՛ Իսրայելի համար:

## THE PALESTINIAN ISSUE IN JORDAN-ISRAEL RELATIONS UNDER KING ABDULLAH II'S RULE

Summary

*Sargis Ghazaryan*

The article deals with the role of Palestinian issue in Jordan-Israel relations under King Abdullah II's rule. It is noted that King Abdullah II continued to follow many of his father King Hussein's /1953-1999/ policies especially toward Israel and Palestinian-Israeli conflict following also the Israel-Jordan peace treaty of 1994. King Abdulla II has actively supported the peaceful settlement of the Palestinian-Israeli conflict, the idea of an independent Palestinian state, as well as the return of Palestinian refugees in international platforms. Despite friendly relations with Israel, Abdallah II's station toward his neighbour marked by rough accents from time to time. Jordan has criticized Israeli military operations in the Palestinian territories and the Jewish settlements. The Jordanian monarch was convinced that the settlement of the Palestinian conflict will turn the region from the conflict into one of stability and development - contributing the improvement of Arab-Isarel relations.

One of the strained periods of bilateral relations was related to al-Aqsa crisis, when the Israeli authorities closed the gates of al-Aqsa mosque to the believers at the end of 2014. The conflict plunged relations between Isarel and Jordan into crisis. Jordan's guardianship over the Islamic holy sites in Jerusalem made Amman to recall its ambassador from Israel for the first time since the countries' 1994 peace treaty. At the same time, Jordan is an important partner and ally for Israel to maintain a balanced relationship. Jordan is the second Arab country (after Egypt) to sign a peace accord with Israel.